ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գևորգ Գեղամի Հակոբյան

ՃՇՄԱՐԻՏԻ ՀԱԿՈՏՆՅԱ ՄՏԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Թ. 00. 01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ
փիլիսոփայական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ս. Մանասյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ե. Մկրտիչյան
փիլիսոփայական գիտությունների, դոցենտ Ա. Բալայան

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. սեպտեմբերի 20-ին ժամը 14:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈԿ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0025, Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. օգոստոսի 9-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Ե. Կ. Մանուկյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի հրատապությունն ու արդիականությունը: Իրավաքաղաքական խոսույթում սովորաբար լինում են ճշմարիտի հակոտնյա մտակառույցներ (կեղծ պնդումներ, սխալներ, ստեր, մոլորություններ և այլն), և ինչպես վերջիններիս, այնպես էլ դրանց բնութագրիչների բացորոշման հրատապությունն ու արդիականությունը պայմանավորված են հասարակական և ճանաչողական մի շարք գործոններով:

Իրավաքաղաքական հարաբերությունները, լինելով մարդկային համակեցության կենսական կարևորության մշտական գործընթացներ, իրականանում են իրավաքաղաքական խոսույթի միջոցով: Իսկ վերջինիս կառավարումը, ինչպես ցանկացած տիրապետում, պահանջում է հնարավորինս լավ ճանաչել և իմաստավորել այն, ինչը պետք է կառավարել: Ուստի բոլոր ժամանակներում էլ կարելի է ու հարկավոր ըստ էության բացորոշել իրավաքաղաքական խոսույթի բաղկացուցիչ տարրերի (բանաձև, դրույթ, մտահանգում, փաստարկ, հիմնավորում և այլն) էությունները, դրանց իմացաբանական որակումներն ու որակման բնութագրիչները՝ հաշվի առնելով, որ իրավաքաղաքական խոսույթը լեզվամտածական բարդ և համադրական տարաբնույթ մի կառուցարկում է:

Իրավաքաղաքական խոսույթի և նրա տարրերի էության բացահայտումն ու որոշարկումը կրկնակի հրատապություն են ստանում Հայաստանի Հանրապետության ներկայիս ներքին ու արտաքին իրավաքաղաքական գործընթացների համատեքստում. իշխանությունների և քաղաքացիների հարաբերություններում՝ հասարակական արդարության, նպատակների ձևակերպման, պահանջների երկկողմանի առաջադրման ու բավարարման, ինչպես նաև համաշխարհային հանրությանը ներկայանալու, համագործակցությունների ծավալներն ընդլայնելու, աշխարհաքաղաքական գործընթացներին առավել գործուն մասնակցություն ունենալու և այլ առումներով: Մանավանդ որ ներկայումս նոր հնարավորություններ և մարտահրավերներ են ի հայտ եկել Հայաստանի Հանրապետության իրավաքաղաքական արտաքին հարաբերությունների կետրոնական հարցերի՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, Արցախյան հիմնախնդրի և հայ-թուրքական դարավոր կոնֆլիկտի կարգավորման ուղղություններում: Եվ վերջապես, որ (թերևս) ամենակարևորն է՝ հարկավոր է լիովին հաղթահարել վերջին պատերազմ(ներ)ի հետևանքով հայաշխարհում առկա իրավաքաղաքական ծանր ճգնաժամը:

Այս ամենը պարտադրում են, որ կատարվեն իրավաքաղաքական ոլորտին առնչվող համակողմանի ու խորքային ուսումնասիրություններ և վերլուծություններ: Բայց ոչ մի ուսումնասիրություն ու վերլուծություն չի կարող ապահովել արդյունավետության բարձր մակարդակ, եթե նախ և առաջ

չիրականացվեն հասկացությունների, դրույթների, հայեցակարգերի և, ընդհանրապես, մտային կառույցների էությունների բացահայտմանը, ճշգրտմանն ու որոշակիացմանն ուղղված աշխատանքներ: Ուստի իրավաքաղաքական խոսույթի տարրերի և դրանց բնութագրիչների էութենական վերլուծությունը ներկայումս մեծ կարևորություն ունեցող աշխատանք է հենց հայկական միջավայրում:

Այսպիսի մի հետազոտություն է «Ճշմարիտի հակոտնյա մտակառույցները իրավաքաղաքական խոսույթում» վերտառությամբ աշխատանքը, որը ներկայացվում է որպես փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն:

Ատենախոսական աշխատանքի առանցքում իրավաքաղաքական խոսույթի ճշմարիտի հակոտնյաներն են, ուստի այն հրատապ և արդիական է նաև գիտափիլիսոփայական առումով. ճշմարիտի հակոտնյա մտակառույցների բացորոշումը, լինելով փիլիսոփայության առանցքային՝ իմացաբանության անբաժանելի մաս, ունի ճանաչողական մեծ արժեք: Որովհետև որքան էլ ինքնակնհայտ ու պարզ թվան ճշմարիտի հակոտնյաների էությունները, միևնույնն է՝ փաստն այն է, որ չկա մեկ-միասնական ըմբռնում, թե *ճշմարիտ* հասկացությանը հակադիր ո՛ր բնութագրիչի գործածությունն է ո՛ր դեպքում տեղին: Իսկ այս խնդրի վերաբերումը և համադրումը (արդի) իրականությանը նշանակում է միս ու արյուն տալ տեսական և հայեցողական մտային արտադրանքին՝ ևս մեկ անգամ փորձելով հաղթահարել մտավոր և նյութական աշխարհների միջև առկա հավերժական խզումը: Հետևաբար ատենախոսական աշխատանքի հրատապությունն ու արդիականությունը հիմնավոր է գիտափիլիսոփայական ամենաընդհանրական առումով:

Հիմնախնդրի գիտական մշակվածությունը: Փիլիսոփայությունը, դեռևս իր ծագման ու կազմավորման նախնական փուլում (ի թիվս այլոց), ունեցել է և ներկայումս էլ ունի առկա գիտելիքը մեկնաբանող, ճշգրտող և որոշակիացնող գործառույթ[1]: Փիլիսոփայական միտքը, մեծ մասամբ մեկնարկելով տիեզերական համընդհանուր օրինաչափություններից, առավել թանձրացական և տեսանելի արտահայտություն է ստացել մարդկային հարաբերությունների կանոնակարգման՝ բարոյականության ոլորտում: Իսկ բարոյական նորմերն ու հարաբերություններն էլ իրենց մարմնացումը գտնում են իրավաքաղաքական գործընթացներում[2]: Այս առումով կարելի է ասել, որ փիլիսոփայությունն ընդհանրապես, այս կամ այն ձևով ու չափով, միշտ էլ բացահայտել, ճշգրտել ու որոշակիացրել է իրավաքաղաքական հարաբերությունները, հայեցակարգերը,

---

[1] Տե՛ս **Kenny A.**, An Illustrated Brief History of Western Philosophy, Malden, “Blackwell Publishing”, 2006, էջ XI:

[2] Հմմտ. ՝ **Berlin I.**, Five Essays On Liberty // Liberty: Incorporating Four Essays on Liberty, New York, “Oxford University Press”, 2002, էջ 168:

խոսույթի տարրերը և այլն: Եվ բնավ պատահական չէ, որ կան փիլիսոփայական այնպիսի աշխատություններ, որոնք վերաբերում են իրավաքաղաքական խոսույթի ճշմարիտի հակոտնյա մտակառույցներին՝ ինչպես ընդհանրական բացահայտման, որոշակիացման, այնպես էլ իրավաքաղաքական խոսույթի ճշմարիտի հակոտնյա որևէ տեսակի համակողմանի վերլուծության ձևով: Օրինակ՝ իրավաքաղաքական հարաբերություններում գործարկվող ճշմարիտի հակոտնյա մտակառույցների էություններին, դրանց գործառությանը, ներքին հակասականությանը, հնարավոր վնասակարությանը և այլ նմանատիպ դրսևորումների անդրադարձել են Հ. Արենդթը[3] և Ա. դե Բենուան[4]: Իսկ ուրիշ հեղինակներ էլ կենտրոնացել են իրավաքաղաքական խոսույթի ճշմարիտի հակոտնյա մեկ տարրի վրա: Օրինակ՝ Ք. Բոթիչին[5] և Հ. Թյուդորը[6] բացահայտել, որոշակիացրել և ճշգրտել են (քաղաքական) միֆի էությունը, գործառույթները, հարաբերություններն իրավաքաղաքական խոսույթի այլ տեսակի մտակառույցների հետ և այլն: Կան այնպիսի աշխատություններ էլ, որոնք ոչ միայն ամբողջությամբ նվիրված են իրավաքաղաքական խոսույթի (ճշմարիտի հակոտնյա) տարրերից մեկին (որոնք բնականաբար գործարկվում են նաև ուրիշ խոսույթներում), այլև հենց այդ աշխատություններով են բացահայտվել ու որոշարկվել տվյալ տարրի բուն էությունը, հասկացության յուրահատուկ իմաստը, գործառությունները և այլն: Վերջիններիս շարքին են պատկանում, օրինակ, Ժ.-Ֆ. Լիոտարի «Հետարդիական կացություն. զեկույց գիտելիքի մասին»[7], որում բացորոշվում են (մեծ) նարատիվների էություններ, ու Ժ. Բոդրիարի «Սիմուլյակրներ և սիմուլյացիա»[8] աշխատությունը, որում կազմվում, բացահայտվում և որոշարկվում են մի շարք հասկացություններ, որոնցից առանցքայինը սիմուլյակրն է:

Իրավաքաղաքական խոսույթում գործարկվող ճշմարիտի հակոտնյաներին, տարբեր նկատառումներով և հետազոտական տարբեր նպատակներով, անդրադարձել են նաև հայ գիտափիլիսոփայական մտքի շրջանակում: Սոցիալական փիլիսոփայության և, մասնավորապես, ազգային կյանքի մշակույթի տեսանկյունից ճշմարիտի հակոտնյաները (միջնորդավորված

---

[3] Տե՛ս **Arendt H.**, Truth and Politics // Truth: engagements across philosophical traditions, edited by José Medina and David Wood, Malden, “Blackwell Publishing”, 2005, pp. 295-314:

[4] Տե՛ս **Бенуа де А.**, По ту сторону прав человека: В защиту свобод, М., “Ион”, 2015:

[5] Տե՛ս **Bottici Ch.**, A Philosophy of Political Myth, New York, “Cambridge University Press”, 2007:

[6] Տե՛ս **Tudor H.**, Political Myth, London, “Pall Mall Press”, 1972:

[7] **Լիոտար Ժ.-Ֆ.**, Հետարդիական կացություն. զեկույց գիտելիքի մասին // Հետարդիական կացություն. զեկույց գիտելիքի մասին, Հեթանոսության դասեր, Պատասխան հարցին, թե ի՞նչ է հետարդիությունը, Եր., «Ակտուալ արվեստ», 2022:

[8] Տե՛ս **Бодрийяр Ж.**, Симулякры и симуляция, Тула, “Текст”, 2013:

ձևով) շոշափվում են Գ. Սողոմոնյանի[9], Է. Հարությունյանի[10], Ս. Զաքարյանի[11] տարբեր աշխատություններում: Գործնական, մասնավորապես, հայ և թուրք-ադրբեջանական կոնֆլիկտի համատեքստում իրավաքաղաքական խոսույթի ճշմարիտի հակոտնյա մտակառույցներին (ուղղակի և անուղղակի) անդրադարձել են Ա. Մանասյանը[12], Յ. Բարսեղովը[13], Հր. Շաքարյանը[14] և այլն:

Հաշվի առնելով վերը հիշատակված (և չհիշատակված) հեղինակների արժեքով և քանակով հսկայածավալ աշխատանքներն ու քննարկումների լայն հորիզոնը՝ կարելի է ասել, որ իրավաքաղաքական խոսույթում գործառող ճշմարիտի հակոտնյա մտակառույցներին առնչվող ուսումնասիրությունները ծավալման բավական հասուն և բարձր մակարդակում են: Այսուհանդերձ ներկայումս (հավանաբար) չկա (հայալեզու) այնպիսի աշխատություն, որն ընդհանրական քննարկման ենթարկի իրավաքաղաքական խոսույթի ճշմարիտի հակոտնյա մտակառույցները՝ բացառապես իմացաբանական մոտեցմամբ, թեկուզ այլ ձևակերպմամբ:

Ուսումնասիրության մեթոդները: Ատենախոսական աշխատանքում մեծ մասամբ կիրառվել են նկարագրության, համեմատության և տրամաբանական վերլուծության մեթոդները, որոնք իրականացվել են *հիմնախնդիր/ներքին ու հարակից խնդիրներ/եզրակացություն* եռամիասնական ընթացակարգով: Կիրառվել են նաև մեթոդական մի շարք այլ հնարներ, որոնցից նշանակալի են համանմանությունը, լրիվ ու ոչ լրիվ մակածումները (ինդուկցիաները), բաղդատությունը և այլն: Որոշ դեպքերում, երբ քննարկումը մեկնարկել է պատմական կամ տրամաբանական ակնհայտ ճշմարիտ դրույթներից, կատարվել են նաև արտածական (դեդուկտիվ) մտահանգումներ:

Ինչպես յուրաքանչյուր գլխի և հատվածի վերջում, այնպես էլ ամբողջ վերլուծության ավարտին կատարվել են ընդհանրացումներ և եզրակացություններ: Որոշ դեպքերում արվել են նաև միջանկյալ եզրահանգումներ, որոնք հիմնավորում են աշխատանքի տվյալ հատվածում

---

[9] Տե՛ս, օրինակ, **Սողոմոնյան Գ.**, Սոցիոմշակութային փոխակերպումներ և մարդաբանական ճգնաժամ, Եր., «ԵՊՀ հրատ.», 2018:

[10] Տե՛ս, օրինակ, **Հարությունյան Էդ.**, Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Եր., «Մակմիլան Արմենիա», 2004:

[11] Տե՛ս, օրինակ, **Զաքարյան Ս.,** Հայոց ինքնության հիմնահարցեր, Եր., «ԵՊՀ հրատ.», 2020:

[12] Տե՛ս, օրինակ, **Մանասյան Ա.**, Ինչո՞ւ ադրբեջանական հանրապետության ցեղասպանական վարքը արտացոլված չէ նրա քաղաքական նկարագրում // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2018 № 3 (27):

[13] Տե՛ս, օրինակ, **Барсегов Ю. Г.**, Нагорный Карабах в международном праве и мировой политике: Документы и коментарий, том II, М., “Мелихово”, 2009:

[14] Տե՛ս, օրինակ, **Շաքարյան Հր.**, Փիլիսոփայություն, Եր., «Երևանի համալս. հրատ.», 2005:

քննարկվող թեմայի հետագա ծավալումը և/կամ նախանշում թեմայի ընթացքի բեկումը դեպի այլ ուղղություն:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսական աշխատանքի ընդհանրական նպատակն է՝ հիմնվելով նախկինում արված ուսումնասիրությունների արդյունքների վրա՝ բացահայտել, ճշգրտել և որոշարկել իրավաքաղաքական խոսույթում շրջանառվող ճշմարիտի առավել նշանակալի հակոտնյա մտակառույցների էությունները՝ բացորոշելով նաև դրանց բնութագրիչների էությունները: Իսկ մասնավոր (և/կամ բուն) նպատակը՝ բացահայտել և բացորոշել իրավաքաղաքական խոսույթում գործարկվող, բայց ցայսօր անհայտության մեջ թաքնված ճշմարիտի հակոտնյա մեկ մտակառույցի և դրա բնութագրիչի էությունները:

Այստեղ կարևոր է նշել, որ ատենախոսությունը անմիջականորեն չի վերաբերում *ճշմարիտ* և *ճշմարիտի* հակոտնյա բնութագրիչներով որակելի մտակառույցների գործարկման թույլատրելի կամ անթույլատրելի լինելու հիմնախնդրին: Այլ կերպ ասած՝ այս ատենախոսությունը բարոյագիտական չէ, թեև սերտորեն առնչվում է նշված գիտակարգին և երբեմն էլ թափանցում արժեբանության սահմաններից ներս:

Այս ուսումնասիրությունը մեկնարկում է խորապատկերային այն հիմնավորումից, ըստ որի՝ առաջնային կարևորությունն այն չէ, թե ճշմարիտի հակոտնյա մտակառույցների գործարկումը որքանո՛վ է (ան)արդար, (ան)ընդունելի, վնասակար կամ օգտակար, այլ այն, որ դրանք սպառնալիք են ճանաչողության գործընթացի համար, եթե բացորոշված և տարբերակելի չեն: Այս սպառնալիքը վերածվում է հասարակական կենսական վտանգի և ավելի մեծանում, երբ առնչվում է իրավաքաղաքական գործընթացներին: Որովհետև ճշմարիտի հակոտնյա մտակառույցները կարող են արգելակել իրավաքաղաքական խոսույթի ծավալման ընթացքը՝ այն հանգեցնելով անհաղթահարելի հակասությունների և հիմնարար թյուրըմբռնումների: Իսկ փակուղային իրադրություններից անցումը ֆիզիկական ուժի գործադրմանը մեկ քայլ է, մանավանդ որ շատ հաճախ իրավաքաղաքական հարաբերությունների կողմերից (և/կամ միջնորդներից) մեկին կամ մի քանիսին ձեռնտու է գործընթացների այդպիսի բեկումը:

Այս ամենի հավանականությունը կարող է զգալիորեն փոքրանալ (կամ իսպառ կանխարգելվել), եթե բացորոշված և ճանաչելի են իրավաքաղաքական խոսույթում գործառող ճշմարիտի հակոտնյա մտակառույցներն ու դրանց բնութագրիչների էությունները, առաջացման պատճառները, դրսևորման ձևերը և այլն:

Վերը նշված բացորոշումներն իրականություն դարձնելու համար աշխատանքում ձևակերպվել ու քննարկվել են ստորև ներկայացվող մի շարք խնդիրներ և կատարվել համապատասխան եզրահանգումներ:

Ա) Հնարավո՞ր է արդյոք սահմանել և/կամ նկարագրել *ճշմարիտ* կամ *ճշմարտություն* հասկացությունը: Եթե հնարավոր է, ապա ի՞նչ է դա: Ինչպիսի՞ դժվարհաղթահարելի և/կամ անհաղթահարելի պատնեշների է հանդիպում ճանաչողության սուբյեկտը ճշմարտության էությունը սահմանելու և նկարագրելու ժամանակ: Իսկ եթե հնարավոր չէ հասկացություններով արտացոլել և բառերով արտահայտել «*ճշմարիտ*» հասկացության և բառի էությունը, ապա ի՞նչ հիմնավորում և նպատակ ունի ինչ-որ մտակառույց *ճշմարիտով* որակելը: Կարո՞ղ է արդյոք իմաստավոր համարվել «ի՞նչ է ճշմարտությունը» հարցադրումը և այլն:

Հիմնավորվել է, որ *ճշմարիտ* հասկացության էությունը ենթակա չէ ո՛չ սահմանման, ո՛չ էլ նկարագրության, որովհետև ո՛չ ավանդական-ձևական տրամաբանության, և ո՛չ էլ իմացաբանության շրջանակներում չի հաջողվում հաղթահարել հակասական ու պարադոքսալ այն իրադրությունները, որոնք հարուցվում են *ճշմարիտ* հասկացության խիստ յուրատիպ էության պատճառով: Նաև՝ գիտությունն ու փիլիսոփայությունը իշխանություն չունեն ճշմարտության նկատմամբ, և *ճշմարիտով* որակումը ճանաչողության սուբյեկտին մտցնում է փակուղի, որովհետև *ճշմարիտն* անորոշ է: Հետևաբար անորոշ է նաև այն մտակառույցը, որը ճշմարիտ է:

Հաշվի առնելով այս ամենը՝ հարկավոր էր փնտրել ու գտնել մի այնպիսի մոտեցում, որը *ճշմարիտի* էությունը սահմանել և/կամ նկարագրել չի ենթադրում: Ուստի այս վերլուծության մեջ, հաստատողական էսենցիալիզմի կողքին, քննարկման առարկա են դարձել ժխտողական էսենցիալիզմը, ժխտողական նոմինալիզմն ու հաստատողական նոմինալիզմը: Եվ քննարկման արդյունքում պարզվել է, որ թեկնածու բոլոր մոտեցումների գործարկումներն էլ տանում են դեպի ճանաչողության գործընթացի ձախողում:

Դժվարհաղթահարելի այս իրադրությամբ հարուցված արգելակումները մեղմելու (չեզոքացնելու) նպատակով՝ իրավաքաղաքական խոսույթի տարրերն աշխատանքում վերլուծվել են ճշմարիտի հակադեմի դիտանկյունից: Քանի որ ճանաչողության սուբյեկտի դիտանկյունի այս փոփոխությունը, ըստ ուսումնասիրության մեջ առկա փաստարկման, ապահովագրում է ճանաչողության գործընթացն այն բոլոր խոչընդոտներից, որոնք հարուցվում են *ճշմարիտ* հասկացության բացատրության փորձերից:

Բ) Բայց այս դեպքում էլ ճանաչողության ծավալման ընթացքն անխոչընդոտ չէ, որովհետև ինքնըստինքյան առաջանում է տրամաբանական մի հարց. ո՞ր հասկացությունն է *ճշմարիտի* հակադեմ (սեռային) բնութագրիչը, որում էլ խմբավորվում են վերջինիս տեսակները:

Պարզվել է, որ *ճշմարիտի* հակադեմը, թեև մտածվում է, սակայն այս մտածման հասկացությունը ու դրան համապատասխան բառը բացահայտված և/կամ կազմված չէ: Աշխատանքում ի ցույց է դրվել նաև այն փաստը, որ մասնագիտական (հայալեզու) գրականության մեջ չկա միասնական կարծիք, թե ո՛ր դեպքերում և ի՛նչ հասկացություն արտահայտելու համար պետք է գործածվեն

«սխալ», «կեղծ», «սուտ», «մոլորություն» և «ճշմարիտին» հականիշ նմանատիպ այլ բառեր: Եվ բացահայտվել է նաև, որ լեզվական այս խառնաշփոթի արմատները գտնվում են մտածողության մեջ, որովհետև այդպիսի և ավելի բարդ խառնաշփոթ առկա է նաև մտածողության մակարդակում: Մանավանդ, որ կան այնպիսի բնութագրիչներ, որոնցով որակելի մտակառույցները դուրս են ճշմարիտ/կեղծ (սխալ, սուտ, մոլորություն և այլն) չափումից:

Հաշվի առնելով այս ամենը՝ յուրաքանչյուր դեպքի համար առաջարկվել է համապատասխան (երբեմն խիստ պայմանական) լուծում՝ վկայակոչելով ու փաստարկելով հօգուտ յուրաքանչյուր առաջարկի ընդունելիության: Քննարկվել են *կեղծ*, *սխալ*, *սուտ*, *մոլորություն*, *ոչ ճշմարիտ*, *ոչճշմարիտ*, *հակաճշմարիտ*, *միֆ*, *նարատիվ*, *սիմուլյակր* հասկացությունները, դրանց կապերը ճշմարտությանը, փոխհարաբերությունները միմյանց հետ և այլն: Ցույց է տրվել, *ճշմարիտին* հակադեմ հասկացության տեսակների փոխներթափանցված ու համակցված կեցության հնարավորությունները, դրանց էութենական կերպավորումներն ու (համատեքստից համատեքստ) վերակերպավորումները, ինչպես նաև՝ ճշմարիտին համակցված կամ իրենում ներառած գոյության ձևեր: Իսկ որպես *ճշմարիտ* հասկացության հակադեմ բնութագրիչ՝ գործածվել է *ճշմարիտի հակոտնյա* հասկացությունը: Մի հասկացություն, որն արդեն գործածական է (թեև ոչ այնքան ճշգրտորեն) և վկայակոչված նաև սույն աշխատանքում:

Գ) Այս բացորոշումներից հետո փորձ է արվել պարզելու, թե ինչքանո՞վ է անհրաժեշտ, եթե ընդհանրապես անհրաժեշտ է, ճշմարիտ մտակառույցների առկայությունը իրավաքաղաքական հարաբերություններում, մանավանդ որ վաղուց հայտնի են քաղաքական գործընթացների բացառապես ստախոսության և անարդարության վրա հիմնված լինելու մտայնություններ: Ինչպիսի՞ օրինաչափ կապ կա մի կողմից իրավաքաղաքական հարաբերությունների և արդարության միջև, իսկ մյուս կողմից՝ արդարության և ճշմարիտ մտակառույցների միջև:

Պարզվել է, որ քաղաքական և իրավական գործընթացները միևնույն հարաբերությունների տարբեր կողմերն են: Դրանք միմյանցից անբաժանելի են, և ցանկացած բնորոշում, որն ուղղված է սրանցից մեկին, ինքնըստինքյան վերաբերում է նաև մյուսին: Փաստարկվել է նաև, որ իրավաքաղաքական հարաբերությունների գոյութենական իմաստն ու նպատակը արդարություն իրականացնելն է, հետևաբար կա՛մ արդարությունը կա իրավաքաղաքական հարաբերություններում, կա՛մ էլ չկա ընդհանրապես, բայց որ այն միշտ պիտո է իրավաքաղաքական հարաբերություններում, ամեն կասկածից վեր է: Եվ ինչպես որ փաստարկվում է աշխատանքում, չի կարող լինել արդարություն, որը հիմնված չէ ճշմարտության վրա՝ անկախ այն բանից, թե արդարության ինչպիսի՛ տեսությունն է համարվում իսկական: Եվ որովհետև ճշմարտությունն արդարության գոյաբանական հիմքն է, ուստի առանց ճշմարտության կամ

ճշմարտության պատրանքի իրավաքաղաքական հարաբերություններ պարզապես հնարավոր չեն:

Դ) Վերը նկարագրվածների լույսի ներքո քննարկվել է ճշմարիտի հակոտնյա մտակառույցների քաղաքական լինել/չլինելու հնարավորությունների խնդիրը, և այս համատեքստում արձանագրվել, որ փիլիսոփայական-իմացաբանական անդրադարձը, ինչպիսին որ հավակնում է լինել ատենախոսական աշխատանքս, չի կարող բավարարվել միայն իրավաքաղաքական խոսույթի ճշմարիտի հակոտնյաները մատնացույց անելով: Այլ հարկ է փնտրել, գտնել, բացահայտել և որոշարկել մտակառույցների մի այնպիսի տեսակ, որը (մինչև հիմա) չի բացորոշվել, իսկ դրա բնութագրիչն էլ անհայտ է: Իսկ որ այդպիսիք պարզապես չեն կարող գոյություն չունենալ, ի թիվս այլոց, ակնհայտ տեսանելի է ճշմարիտի հակոտնյաների հարատև (վերա)կերպավորումների գործընթացներում:

Հիմնավորվել է, որ իրականում ոչ միայն կա մտակառույցի այդպիսի տեսակ, այլ միևնույն ժամանակ կարող է գոյություն ունենալ այդպիսի մտակառույցների մի ամբողջ դաս: Որովհետև իրավաքաղաքական գործընթացներում (և ո՛չ միայն՝ իրավաքաղաքական) շատ հաճախ առաջանում է մի իրադրություն, որի դեպքում ճշմարիտի հակոտնյաները վերակերպավորվում են՝ պահպանելով իրենց էական հատկանիշները, վերածվելով ճշմարիտի հակոտնյայի նոր տեսակի: Եվ ճշմարիտի հակոտնյաների այս դասի և/կամ տեսակի առաջացման, էության ու գործառության բացորոշումն ատենախոսական աշխատանքիս գիտական նորույթն է, որին անդրադառնում ենք ստորև:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը մասնավորապես այն է, որ բացահայտվել, սահմանվել և որոշարկվել է իրավաքաղաքական խոսույթում գործառող ճշմարիտի մի այնպիսի հակոտնյայի տեսակ և/կամ վերակերպավորում, որին մասնագետները ցայսօր անմիջական ուշադրություն չեն դարձրել: Անմիջական դիտարկման չի ենթարկվել նաև դրա իմացաբանական բնութագրիչը: Ճշմարիտի այդ հակոտնյան աշխատանքում ներկայացված է *ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյա* նկարագրողական հասկացությամբ:

Այս հասկացությունը լավագույնս արտացոլում է իմացաբանական այն բնութագրիչը, որով իրավացիորեն որակելի են այն մտակառույցները, որոնք, չլինելով ճշմարիտ, զետեղվում են ճշմարիտի տեղում՝ չթաքցնելով իրենց ճշմարիտ չլինելը: Դրանք, մինչև լեգիտիմանալը, կարող են լինել՝ ստեր, տրամաբանական սխալներով կառուցված փաստարկներ, կեղծ պնդումներ, մոլորության արդյունքում առաջացած համոզմունքներ և ճշմարիտի ցանկացած տեսակի հակոտնյա մտակառույցներ: Իսկ ընդունվելով և ամրակայվելով՝ դրանք վերածվում են՝ լեգիտիմացված ստերի, տրամաբանական սխալներով կառուցված, բայց ընդունված (լեգիտիմացված) փաստարկների, լեգիտիմացված,

բայց կեղծ պնդումների, մոլորության արդյունքում առաջացած, բայց ընդունված (լեգիտիմացված) համոզմունքների և այլն:

Ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյա մտակառույցները առաջանում և ամրակայվում են իրավաքաղաքական խոսույթում, երբ իրավաքաղաքական հարաբերությունների դերակատար կողմերից մեկը (կամ մի քանիսը) ճշմարիտի հակոտնյայի մի կամայական կերպավորում է ներմուծում խոսույթ՝ հարաբերությունների մյուս կողմ(եր)ին ուղղակի կամ անուղղակի (թաքուն կամ բացահայտ) ստիպելով ընդունել դրանք: Իրավաքաղաքական հարաբերությունների այն կողմը, որին առաջադրվում (և/կամ պարտադրվում) է ճշմարիտի հակոտնյա մտակառույցը, կա՛մ միտումնավոր անտեսում է առաջադրված մտակառույցը և լռում այդ մասին, կա՛մ լռելյայն կրկնօրինակում է այդ մտակառույցը և սկսում այն կիրառել, կա՛մ էլ բարձրաձայն հայտարարում է, որ ընդունում է առաջադրված մտակառույցը և, կրկին, սկսում կիրառել: Այս ձևով հարաբերությունների բոլոր կողմերը միտումնավոր անտեսում և մոռացության են մատնում կրկին բոլորին հայտնի այն ակնհայտ փաստը, որ առաջադրված և ընդունված մտակառույցը ճշմարիտ չէ՝ լեգիտիմացնելով այն (դրա բովանդակությունը) ճշմարիտի տեղում: Ժամանակի ընթացքում ճշմարիտի այդ հակոտնյայի դիրքերն ավելի են ամրակայվում (նաև կրկնության միջոցով), որի խնդրականացումն ինքնաշխատորեն տաբույավորվում է: Ի վերջո՝ ճշմարիտի հակոտնյան վերածվում է ինքնակնհայտ, բացարձակ ու վերջնական «ճշմարտության» և շատ հաճախ էլ գործարկվում որպես լոկուս:

Իրավաքաղաքական խոսույթում ճշմարիտի հակոտնյա այս տեսակի ի հայտ գալու և գործառելու պատճառը, մի կողմից անձնային և/կամ խմբային շահն է, իսկ մյուս կողմից՝ անելանելի իրադրության առկայությունը: Չեն բացառվում նաև այնպիսի դեպքեր, որ այս երկու պատճառներն առկա լինեն նաև միաժամանակ: Քաղաքական դերակատարները, չունենալով այլընտրանք, հայտնվում են անելանելի դրության մեջ և ստիպված ընդունում ու լեգիտիմացնում են այլ դերակատարների (կոնֆլիկտող և/կամ միջնորդ կողմ) մատուցած մտակառույցները՝ հստակ գիտակցելով, որ դրանք ճշմարիտ չեն: Տվյալ պահին քաղաքական դերակատարը նախընտրում է ընդունել ու լեգիտիմացնել ճշմարիտի հակոտնյա այդ մտակառույցը՝ իբրև չարյաց փոքրագույն: Այսինքն՝ այդ նախընտրությունը առնվազն այդ պահին ըմբռնվում է որպես ձեռնտու: Հնարավոր է նաև այնպիսի դեպք, երբ այդ ձեռնտու լինելը բխի ոչ թե առավել մեծ վնասը շրջանցելու հանգամանքից, այլ պարզապես շահավետ լինի: Վերջապես՝ հնարավոր է, որ իրավաքաղաքական դերակատարին առաջադրված ճշմարիտի հակոտնյա մտակառույցը, չունենալով այլընտրանք, համընկնի տվյալ դերակատարի խմբային և/կամ անհատական շահերի հետ:

Ատենախոսության մեջ հիմնավորվում է այն պնդումը, որ ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյաները որակող բնութագրիչը մի նորակազմ հատուկ (գիտա)բառ-հասկացությամբ անվանելու կարիք կա՝ հաշվի առնելով, որ

ճշմարիտի արդեն ճանաչելի և/կամ քիչ թե շատ բացորոշված բնութագրիչներն ունեն իրենց անվանումները: Սակայն ելնելով գիտափիլիսոփայական զգուշավորության և ճշգրտության նկատառումներից՝ նոր բացահայտված այդ բնութագրիչն արտացոլող ու արտահայտող նորահնար բառ և հասկացություն չի առաջարկվում:

Վերլուծության մեջ ի հայտ են բերվել գիտական նաև այլ՝ հարակից նորույթներ, որոնցից առավել նշանակալիները ներկայացվում են ստորև:

1. Բացորոշվել են Գ. Ֆրեգեյի նախանշած (ակնարկած) փակուղային ու անհաղթահարելի այն դժվարությունները[15], որոնց հանդիպում է ճանաչողության սուբյեկտը՝ *ճշմարիտ* հասկացությունը սահմանելիս ու նկարագրելիս:

2. Կատարվել են ճշգրտումներ և/կամ պայմանական առաջարկներ են ներկայացվել *ճշմարիտ* հասկացության հակադիր բնութագրիչների վերաբերյալ՝ որոշարկելով *սխալի*, *կեղծի*, *ստի*, *մոլորության*, *միֆի*, *նարատիվի*, *սիմուլյակրի* իմաստային նրբերանգները, դրանց տեղերն ու դերերը ճանաչողության գործընթացում, կիրառելիության սահմանները և այլն:

3. Հիմնավորվել է այն պնդումը, ըստ որի՝ իմացաբանական որակման բոլոր բնութագրիչները գտնվում են գոյաբանական և իմաստային կախվածության մեջ ճշմարիտից: Իսկ միմյանց հետ էլ կարող են լինել ոչ միայն խաչավորման, համարժեքության և տրամաբանական գրեթե բոլոր հնարավոր հարաբերությունների մեջ, այլև շատ հաճախ վերակերպավորվում և փոխարկվում են մեկը մյուսին:

4. Ցույց է տրվել, որ հնարավոր չէ անմիջականորեն գործ ունենալ *ճշմարիտի* հակադեմ հասկացության հետ, որովհետև այն միշտ դիմավորվում, (վերա)կերպավորվում ու այլակերպվում է՝ վերածվելով իր տեսակներից մեկին կամ մի քանիսին:

5. Բացահայտվել ու փաստարկվել է, որ արդարության միակ կեցութավայրը իրավաքաղաքական գործընթացներն են:

6. Փաստարկվել է, որ արդարությունը կարող է գոյություն ունենալ՝ բացառապես հիմնված լինելով ճշմարիտ մտակառույցների վրա, և որ ցանկացած կոնֆլիկտի «.... արդար կարգավորմանը հասնելու համար, նախևառաջ հարկավոր է հասնել դրա մասին ճշմարտությանը»[16]:

7. Գիտական հարակից նորույթ կարելի է համարել նաև պատմական, արդի և արտապատմական (վերժամանակային) այն բոլոր իրադրությունների խոսույթներում առկա ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյաների

---

[15] **Фреге Г.**, Мысль. Логические исследования // Логика и логическая семантика: Сборник трудов, М., “Аспент Пресс”, 2000, с. 327.

[16] **Манасян А.**, Путь Философии к Истине о Конфликте // Փիլիսոփայությունը Արդի Աշխարհում, UNESCO-ի Փիլիսոփայության միջազգային օրվա կապակցությամբ գիտաժողովի նյութեր, Գիրք IV, 20 նոյեմբերի 2014, Եր., «Limush Printhouse», էջ 267:

բացահայտումները, որոնք ներկայացված են ատենախոսական աշխատանքի մեջ՝ որպես օրինակներ: Եվ հատկանշական է, որ դրանց բացորոշումները, բացի զուտ գիտափիլիսոփայական գիտելիք լինելուց, կարող են կիրառելի և օգտակար լինել նաև արդի իրավաքաղաքական գործընթացներում: Այդ օրինակներից մեկը վերաբերում է դեմոկրատական կառավարման հայեցակարգին, երկրորդը՝ հետխորհրդային հայ հասարակությանը, և երրորդը՝ հայ ու թուրք-ադրբեջանական կոնֆլիկտին:

8. Ատենախոսության գիտական նորույթ կարող են համարել նաև այն բացահայտումները, որոնք փաստարկմամբ և օրինակներով մատնացույց են անում այն, որ ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյաներ գործառում են մարդկային գործունեության (գրեթե) բոլոր ոլորտներում ու մակարդակներում. կրոն, գիտություն, կրթություն, կենցաղ և այլն:

Ատենախոսության տեսական ու գործնական նշանակությունը: Ատենախոսական այս աշխատանքը կարող է օգտակար լինել փիլիսոփայության, իրավագիտության և քաղաքագիտության դասավանդման գործընթացներին (վերջին երկուսի դեպքում՝ որպես օժանդակ նյութ): Ինչպես նաև՝ բոլոր այն ընթերցողներին, որոնք հետաքրքրվում են գիտությամբ, փիլիսոփայությամբ (իմացաբանությամբ, փաստարկման տեսությամբ, ձևական տրամաբանությամբ և այլն), իրավունքով, քաղաքականությամբ, լրագրությամբ և դրանց տեսական ու գործնական դրսևորումներով առհասարակ:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել և քննարկվել են ԵՊՀ Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի (2019-2020 թթ. և 2022-2023 թթ.) սեմինարներում, մասամբ էլ՝ ԵՊՀ «Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ» 2014 թ. ու 2019 թ. միջազգային գիտաժողովներում: Հիմնական դրույթները հոդվածների տեսքով տպագրվել են «Բանբեր Երևանի համալսարանի», «Եվրոպական համալսարան. գիտական հոդվածների ժողովածու», «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», «ՎԷՄ համահայկական հանդես» և այլ պարբերականներում:

Ատենախոսության պլանը քննարկվել է ԵՊՀ Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնում 2017 թ. մարտին, ամբողջական շարադրանքը՝ 2019 թ. ապրիլին, իսկ 01.06.2023 թ. վերջնական քննարկումից հետո երաշխավորվել է հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից՝ առաջինը երեք, երկրորդը չորս հատվածից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 170 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածության» մեջ հակիրճ ներկայացվում է կատարված աշխատանքի հիմնական բովանդակությունը, թեմայի արդիականությունը, մեթոդները, գիտական նորույթը և այլն:

Առաջին՝ «Ճշմարիտ և ճշմարիտի հակոտնյա մտակառույցներ» վերտառությամբ գլխի առաջին հատվածում («Ճշմարիտի էության նկարագրման և սահմանման անհնարինությունը») ներկայացվում է *ճշմարիտ* հասկացության անբացատրելիությունը: Նույն գլխի երկրորդ հատվածում («Ուսումնասիրության օբյեկտին *ճշմարիտ* հասկացության հակադեմի դիտանկյունից մոտենալու շուրջ») հիմնավորվում է ճանաչողության սուբյեկտի դիտանկյան փոխատեղումը: Իսկ երրորդ հատվածում («Պարզաբանում *ճշմարիտ* հասկացության հակադեմի վերաբերյալ. ճշմարիտի հակոտնյա մտակառույցներ») բացորոշվում է *ճշմարիտի* հակադեմ բնութագրիչի էությունը և *ճշմարիտի հակոտնյա* հասկացության գործածության առավելությունը:

Երկրորդ՝ «Իրավաքաղաքական խոսույթում գործառող ճշմարիտի հակոտնյաներ» վերտառությամբ գլխի առաջին հատվածում («Ճշմարիտի անհրաժեշտությունը և արդարության պիտոյականությունը իրավաքաղաքական գործընթացներում») փաստարկվում է իրավաքաղաքական հարաբերություններում ճշմարիտի գոյաբանական անհրաժեշտությունը և արդարության գոյութենական իմաստ հաղորդող պիտոյականությունը: Նույն գլխի երկրորդ հատվածում, որն այս վերլուծության առանցքն է («Ճշմարիտի հակոտնյա լեգիտիմացված մտակառույցները իրավաքաղաքական խոսույթում»), բացորոշվում է *ճշմարիտի հակոտնյա լեգիտիմացված մտակառույցներ* հասկացության էությունը, դրանց ծագման ու ամրակայման գործընթացները, պատճառները, պայմանները և այլն: Երրորդ հատվածը («Դեմոկրատիայի արդար լինելու պնդումը որպես ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյա մտակառույց») վերաբերում է դեմոկրատական կառավարման ձևը բացարձակ արդար համարող մտայնությունը, որը դիտարկվում է որպես ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյա: Չորրորդ հատվածը («Ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյաների օրինակներ հայկական (ներքին և արտաքին) իրավաքաղաքական խոսույթում») վերաբերում է հայաշխարհի իրավաքաղաքական ներքին և արտաքին խոսույթներում գործարկվող ճշմարիտի լեգիտիմացված մի շարք հակոտնյաների:

Վերլուծությունն ավարտվում է «Եզրակացությամբ», որը հիմնված է վերլուծության բոլոր հատվածների հարցադրումների, պնդումների, փաստարկների, օրինակների, եզրահանգումների արդյունքների վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնական եզրակացություն: Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունից բխեցվել է, որ և՛ համաշխարհային իրավաքաղաքական խոսույթում, և՛ մարդկային գործունեությունների բոլոր խոսույթներում առկա է ճշմարիտի հակոտնյայի մինչև այժմ չբացորոշված մի տեսակ՝ ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյան.

1. ճշմարիտի այս հակոտնյան և՛ *ճշմարիտ* հասկացության հակադեմ բնութագրիչի տեսակ է, և՛ ճշմարիտի հակադիր բնութագրիչների մի ամբողջ դաս,
2. ճշմարիտի ցանկացած հակոտնյա կարող է լեգիտիմանալ և վերակերպավորվել որպես իր իսկ լեգիտիմացված տարբերակ՝ չդադարելով լինելուց այն, ինչ որ էր նախքան լեգիտիմանալը,

Ընթացիկ եզրակացություններ՝

1. ճշմարտությունը արդարության գոյաբանական հիմքն է.
2. արդարությունը իրավաքաղաքական գործընթացների գոյութենական իմաստն է.
3. *ճշմարիտ* հասկացությունը բացատրելի չէ.
4. ճշմարիտն անորոշ է.
5. ուսումնասիրության օբյեկտին *ճշմարիտի* հակադեմի դիտանկյունից մոտենալը շրջանցելի է դարձնում ճշմարիտի անորոշությունից ծագող խնդիրները.
6. ճշմարիտի բոլոր հակոտնյաները սկզբունքորեն ճանաչելի են.
7. ճշմարիտի հակոտնյաներից բխող ռիսկերը կառավարելի են.
8. ճշմարիտի լեգիտիմացված հակոտնյաների գործարկումները կարող են լինել և՛ օգտակար, և՛ վնասակար:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հակոբյան Գ., «Արդարությունն ու ճշմարտությունը իրավաքաղաքական ոլորտում. որոշ բարդություններ և դրանց լուծումները» // «ՎԷմ» համահայկական հանդես, 2020, ԺԲ (ԺԸ), թիվ 1 (69), 130-153 էջ:
2. Հակոբյան Գ., «Դեմոկրատիայի փիլիսոփայական քննադատություն. Որոշ հիմնախնդիրներ և դրանց հնարավոր լուծումները» // «ՎԷմ» համահայկական հանդես ԺԱ (ԺԷ) տարի, 2019, թիվ 2 (66), ապրիլ-հունիս, 9-24 էջ:
3. Հակոբյան Գ., «Իրավաքաղաքական խոսույթի ոչճշմարիտ տարրերի շուրջ» // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2020 № 1 (31), 32-43 էջ:
4. Հակոբյան Գ., «Լեգիտիմացված ոչ ճշմարիտի ծագման և գործառման պատճառներն ու մեխանիզմները իրավաքաղաքական խոսույթում» // Եվրոպական համալսարան, Գիտ. հոդվածների ժող., Եր.: «ԵՀ հրատ.», 2020, Գիրք 11(01), 497-513 էջ:
5. Հակոբյան Գ., «Կորոնավիրուսային համավարակի խոսույթի իմացաբանական որակման շուրջ» // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2021 № 1 (34), 44-54 էջ:
6. Հակոբյան Գ., «Հայաստանյան բուհերում դասավանդվող փիլիսոփայական գիտակարգերի հերթագայման հիմնախնդրի շուրջ» // Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր., «Տնտեսագետ», 2021, 1(61), 174-189 էջ:
7. Հակոբյան Գ., «Ճանաչման հիմնահարցը գիտական իմացության և իրավունքի ու քաղաքականության ոլորտներում» // Գիտական Արցախ, № 2(5), 2020, Եր., «Արցախ», 2020, 210-222 էջ:
8. Հակոբյան Գ., «Ճշմարիտի էության բացատրման և սահմանման խնդրահարույց բնույթը» // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Երևան, 2020 № 3 (33), 39-50 էջ:
9. Հակոբյան Գ., «Ուսումնասիրության օբյեկտին ճշմարիտ հասկացության հակադեմի դիտանկյունից մոտենալու շուրջ» // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2022, № 3, 50-69 էջ:

Геворг Гегамович Акобян

АНТИПОДНЫЕ МЫСЛЕННЫЕ СТРУКТУРЫ ИСТИННОГО В ЮРИДИКО-ПОЛИТИЧЕСКОМ ДИСКУРСЕ

Диссертация на соискание учёной степени кандидата философских наук по специальности 09.00.01 “Философия”

Защита состоится 20 сентября 2023 года в 14:00 на заседании специализированного совета Философии и социологии 013 ВАК, по адресу 0025, г. Ереван, ул. Абовяна 52а, Ереванском государственном университете

РЕЗЮМЕ

Юридико-политические отношения, будучи жизненно важной стороной общественного сосуществования, реализуются в том числе и через юридико-политический дискурс. Управление этим дискурсом, как и любое другое управление, требует познания и осмысления того, чем предполагается управлять. Поэтому следует корректно эксплицировать суть мысленных структур юридико-политического дискурса (формулировок, положений, умозаключений, аргументов, обоснований, и т.д.), их гносеологические характеристики, с учётом сложности и разнородности его лингво-ментальных конструктов, как подлежащих познанию специфических феноменов. И, поскольку юридико-политический дискурс обычно содержит антиподные истине мысленные структуры (ошибки, ложь, заблуждения, и т.д.), то юридико-политический дискурс в первую очередь следует рассматривать в ракурсе контрарности истине.

Философско-гносеологический анализ, на который претендует данная диссертационная работа, не может ограничиться только указанием антиподов истины в юридико-политическом дискурсе, как это делается в юридико-политической практике (юридические и политические деятели, эксперты, журналисты и т. д.). Научно-философская суть настоящей работы – поиск, нахождение и уточнение мысленных структур в юридико-политическом дискурсе, которые не были эксплицированы в выбранном нами

ракурсе. А на то, что таковые просто не могут не существовать, в числе прочего указывает постоянное обогащение арсенала антиподов истины новыми формами.

Не эксплицированной мысленной структурой является раскрытый настоящим исследованием своеобразный элемент юридико-политического дискурса, который в настоящей работе определён посредством понятия ***легитимированный антипод истины***.

В работе обосновано, что в действительности имеется не только такой вид мысленной структуры, но и показано существование целого класса таких мысленных структур. Объясняется это тем, что в юридико-политических процессах очень часто возникает ситуация, при которой антиподы истинного преобразуются, сохраняя свои существенные признаки и превращаясь в новый вид антипода. Экспликация этого вида и/или класса антиподов истины, их возникновения и функционирования является научной новизной настоящей диссертационной работы.

Понятие легитимированного антипода истины наилучшим образом описывается той гносеологической ситуацией, когда мысленные структуры, будучи не истинными, размещены на месте истинного, не скрывая то, что они не есть истинные.

До легитимизации они могут быть ложью, логически неверно построенными аргументациями, ложными утверждениями, заблуждениями и любым другим видом антиподных мысленных структур истинного. Будучи принятыми и закреплёнными, они превращаются в легитимированную ложь, логически неверно построенные, но легитимированные аргументации, ложные, но легитимированные утверждения, легитимированные заблуждения и любые другие виды легитимированных антиподных мысленных структур истинного. В результате, эти мысленные структуры, не будучи истинными (и не скрывая свою неистинность), приобретают статус общепризнанности и помещаются в зоне, отдалённой от научно-критического анализа.

Легитимированные антиподные мысленные структуры истинного возникают и закрепляются в юридико-политическом дискурсе, когда одна из (или несколько) действующих сторон юридико-политических отношений внедряет в дискурс какой-либо антипод истины, прямо или косвенно (тайно или явно) заставляя другую сторону (другие стороны) принять его. Сторона, входящая в юридико-политические отношения, которой навязывается антиподная истине мысленная структура, либо намеренно не замечает выдвинутую мысленную структуру и умалчивает об этом, либо молча копирует эту мысленную структуру и применяет её, или же публично принимает выдвинутую мысленную структуру, и начинает её

применять. Таким образом, все стороны политических отношений преднамеренно игнорируют и предают забвению тот уже известный всем и очевидный факт, что выдвинутая и принятая мысленная структура не истинна, и ставят её вместо истинной, легитимируя её. Со временем этот антипод истины посредством повторения укореняется в дискурсной практике и подвергание сомнению истинности этой мысленной структуры автоматически табуируется. В конце концов, антипод истинного превращается в самоочевидную, абсолютную и окончательную «истину» и очень часто применяется в качестве локуса.

Причиной возникновения и функционирования этого вида антипода истины в юридико-политическом дискурсе является, с одной стороны, личный и/или групповой интерес, а с другой стороны – наличие безвыходной политической ситуации. Не исключаются также случаи, когда эти две причины могут присутствовать одновременно. Политические акторы, оказываясь в безвыходной ситуации и не имея альтернативы, вынуждены бывают принять и легитимизировать мысленные структуры, выдвинутые другими акторами (могущими быть конфликтующей стороной или посредником), чётко осознавая, что эти мысленные структуры не истинны. Политический актор предпочитает принять и легитимизировать эту антиподную истине мысленную структуру как наименьшее из зол. То есть, это предпочтение, по крайней мере в момент принятия, воспринимается как выгодное. Возможен также случай, когда эта выгодность исходит не из стремления избежать наибольшего вреда, а просто потому, что это выгодно. Наконец, возможно, что выдвинутая юридико-политическим актором антиподная истине мысленная структура, не имея альтернативы, совпадала бы с групповым и/или личным интересом данного политического актора.

В диссертационной работе отражены примеры легитимированных антиподных истине мысленных структур, играющих большую роль как в текущих геополитических процессах вообще, так и в армяно-турецких и армяно-азербайджанских конфликтах, в частности.

Gevorg Gegham Hakobyan

ANTIPODAL MENTAL STRUCTURES OF THE TRUE IN JURIDICO-POLITICAL DISCOURSE

Thesis for the Receiving Academic Degree of Candidate of Philosophical Sciences under the specialty 09.00.01 "Philosophy".

The defense will be held on 20 September 2023, at 14:00, at the committee meeting of Philosophy and Sociology with the speciality of HCC 013 at the Yerevan State University, 52a, Abovyan Str., Yerevan, 0025

ABSTRACT

Juridico-political relations, being a vital aspect of social coexistence, are also realized through juridico-political discourse. The management of this discourse, like any other management, requires knowing and making sense of what is intended to be managed. Therefore, the essence of mental structures of juridico-political discourse (formulations, provisions, inferences, arguments, grounding, etc.) and their gnoseological characterizers should be correctly explicated, considering the complexity and heterogeneity of its linguo-mental constructs as specific phenomena subject to cognition. And since the juridico-political discourse usually contains the mental structures antipodal to the true (mistakes, lies, aberrations, etc.), the juridico-political discourse should first of all be viewed from the perspective of contrariness to the truth.

The philosophical-gnoseological analysis claimed by this dissertation cannot be limited to merely indicating the antipodes of truth in the juridico-political discourse, as practiced in the juridico-political matters (by legal and political figures, experts, journalists, etc.). The scientific and philosophical essence of this paper is to search, find and ascertain the mental structures in the juridico-political discourse that have not been explicated in our chosen perspective. And the fact that they simply cannot but exist is indicated, among other things, by the constant enrichment of the arsenal of antipodes of truth with new forms.

The non-explicated mental structure is the peculiar element of juridico-political discourse disclosed by the present study, which is defined in this paper through the concept of ***legitimized antipode of truth***.

The paper substantiates that in reality there is not only such a species of mental structure, but also shows the existence of a whole class of such mental structures. This is explained by the fact that in juridico-political processes there is very often a situation

in which the antipodes of the true are transformed, preserving their essential features and turning into a new species of antipode. The explication of this species and/or class of the antipodes of truth and their origination and functioning is the scientific novelty of this dissertation work.

The notion of a *legitimized antipode of truth* is best described by the gnoseological situation when mental structures, while being not true, are placed in lieu of the truth, without hiding the fact that they are not true.

Before legitimization, they can be lies, logically wrongly constructed arguments, false assertions, aberrations, and any other species of antipodal mental structures of the truth. Once accepted and solidified, they turn into legitimized lies, logically wrongly constructed but legitimized arguments, false but legitimized assertions, legitimized aberrations and any other species of antipodal mental structures of the truth. As a result, these mental structures, while not being true (and not hiding their untruthfulness), acquire the status of generally accepted and are placed in an area distant from scientific and critical analysis.

Legitimized antipodal mental structures of the truth originate and become solidified in juridico-political discourse when one (or more) of the actors of the juridico-political relations embeds some antipode of truth into the discourse, directly or indirectly (secretly or overtly) forcing the other party (other parties) to accept it. The party involved in the juridico-political relations to whom a mental structure antipodal to the truth is imposed either deliberately omits to notice the proposed mental structure and remains silent about it, or silently copies that mental structure and applies it, or publicly accepts the proposed mental structure and begins to apply it. Thus, all parties to the political relations deliberately ignore and obliviate the already well-known and obvious fact that the proposed and accepted mental structure is not true and place it in lieu of the true one, legitimizing it. Over time, this antipode of truth becomes entrenched in the discourse practice through repetition, and questioning the truthfulness of this mental structure is automatically tabooed. Eventually, the antipode of the truth turns into a self-evident, absolute and final "truth" and is very often applied as a locus.

The cause of the origination and functioning of this species of antipode of truth in juridico-political discourse is, on the one hand, a personal and/or group interest, and on the other hand, the presence of a desperate political situation. Cases are not excluded where these two causes may be present at the same time. Political actors, finding themselves in a desperate situation and having no alternative, are forced to accept and legitimize the mental structures proposed by other actors (who may be the conflicting party or mediator), being clearly conscious that these mental structures are not true. The political actor prefers to accept and legitimize this antipodal mental structure of the truth as the lesser of evils. That is, this preference is perceived as advantageous at least at the time of acceptance. It may also be the case that this

advantageousness comes not from an urge to avoid the greatest harm, but simply because it is advantageous. Finally, it is possible that the antipodal mental structure of the truth proposed by the juridico-political actor, having no alternative, would coincide with the group and/or personal interest of the political actor in question.

The dissertation reflects examples of legitimized mental structures antipodal to the truth playing a major role both in current geopolitical processes in general and in the Armenian-Turkish and Armenian-Azerbaijani conflicts, in particular.